



ԼՐԱ Գ Ի Ր

4. Պոլսոյ համար Տարեկան հան-	
դերձ Օրաբերքով 180 դր.	
Վեցամսեայ „ „ „ 100 „	
Գաւառաց համար Տարեկան հան-	
դերձ Օրաբերքով 200 „	
Վեցամսեայ „ „ „ 100 „	
Մեծ Բիւր՝ „ „ „ 2 դր.	
Օրաբերք „ „ „ 20 փր.	

Ծանուցանեց տողը մեկ անգամի համար
3 դր. երկու անգամի համար 2 դր.
Դուրս գալիս լրագրաց համար ծախ-
քը Խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ համակ կամ որ
եւ իցէ գրութիւն Խմբագիր-Տնօրէ-
նին պիտի ուղղուի. եւ հաճախ ծախ-
քը ալ որ կողմից վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՕԴՈՍՈՍ 1866

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի խաղաղութիւնը վերա-
դարձաւ և այն փոփոխութիւնները որք
ասիէ կէս դար առաջ տարեւոր պատե-
րադմենտով չէին կրնար կատարուիլ,
մէկ երկու ամսուան մէջ լինալով վեր-
ջանալու վրայ են: Մեծն Պրէսիտը
կի եօթնամեայ պատերազմով չկրցած
ձեռք բերած օգուտները՝ Բրուսիա
այս անգամ եօթնորեայ պատերազմով մը
վաստակեցաւ:

Պատմութեան նշանաւոր գէպը
բնէ մէկը պիտի ըլլայ այս կարծ պատե-
րադմենտը, ուր ժամանակիս զիտութիւնն
իր նորանոր կատարելագործութիւնն
ով մեծապէս նպաստեց գինուց բաղդը
վճարելու, որմէ ոչ միայն ներկայ ազ-
գերն, այլ և անոնց ապագայ սերունդ-
ները մեծ դաս մը կրնան առնուլ: Ուր-
չափ ալ որ այս նիւթերուն վրայ խօս-
ւածներն արդէն բաւական են, բայց
հիմա որ հաշտութիւնը Վերամիտի մէջ
կըքուցուի, պատերազմէն ելած յարա-
յակն և քաղաքական հետեւութիւն-
ներն ընթերցողաց առջև դնել խիստ
կարևոր կը համարվի:

Եւրոպայի խաղաղութիւնը մեզ կը սով-
բեցնեն թէ այսուհետեւ զօրութիւնն
կրտսէս Պարսիկ ըստին համեմատ գի-
տաւթեան մէջ է, և բաղնաքունդ բա-
նակներէն աւելի մեծ դօրձ կը տեսնեն
զիտութեան շնորհիւ հնարած ասեղ-
նաւոր ճրագանները, շերտաւոր թիւղա-
նոթները, հեռագիրն ու երկաթուղին
ինչպէս նաև պատերազմին մէջ ռազմա-
գիտական ճարտար շարժումներն ու
անվէհեր և հանձնարել հրամանատա-
րութիւն մը: Եւրոպայի խաղաղութիւնը

կը սովեցնեն մեզ թէ դատարա-
կութիւնն ինչպէս ընտիր քաղաքացի-
ներ՝ այնպէս ալ ընտիր գնիւղները կը
հանէ, ինչպէս են Բրուսիայից, որոց
մէջ ռազմունքն ընդհանրապէս տարած-
ւած է, և թէ աւստրիական զօրաց
պէս ինչպէս համար կուտեն չգիտող
և կառավարութեան հրամանաւ իրենց
գեղջիկական աշխատութիւններէն քաշ-
ւած մեքենայ-գնիւղներն անկարող
են պատերազմիլ՝ աւելի կիրթ և դաս-
տիարակեալ զօրաց գէտ: Եւրոպայի
ուսման ինչպէս ամեն բանի՝ այնպէս ալ
պատերազմի մէջ ունեցած մեծ և ան-
հրաժեշտ կարևորութիւնը, կանոնա-
ւոր երեւմտեղի մը տեղութեան տուած
զօրութիւնը, ինչպէս նաև թղթադը-
րամով և փոխառութեամբ ապրելէ և
անկարող երեւմտեղ մ'ուսնալէ յառաջ
եկած աղետաբեր տկարութիւնը: Եւրո-
պայի հետեւութիւնները կը սովեցնեն թէ
զանազան ազգութիւններէ, անմիասնա-
կան տարրերէ և ազգա ժողովուրդ-
ներէ բաղկացած տեղութիւն մը, թէ և
յարտաքուստ մեծ ալ երկի իր բնակ-
չաց բազմութեամբ, չկրնար հաւասա-
րիլ միացեալ ազգութեան և ուսեալ
ժողովուրդներէ բաղկացած տեղութեան
մը, թէ և վերջին յարտաքուստ փորձ-
երէն: Եւրոպայի խաղաղութիւնները կը սով-
բեցնեն թէ յաղթութիւնը կանխատես
և շարունակ յառաջգնութեամբ կրնայ
ձեռք բերուիլ, և թէ առանց այս յա-
ռաջգնութիւնն ունենալու՝ յաղթուն
եղած դիմ և մեծարանութեամբ ասպա-
րէզ երկրներն, ինչպէս են Բալկանից,
յետոյ նուազագոյն կը բերեն իրենց
վրայ: Ալ երջանպէս այս ամեն հետեւ-
ութեանց եզրակացութիւնն այն է թէ

աշխարհի վրայ յաղթութիւն փառք
պարծանք և զօրութիւն ունեցողները
գերազոյժ քաղաքակրթութեան աւելի
զոյլ ազգերը միայն կրնան ըլլալ թէ այն
ազգերն ու տեղութիւնները որք զուրկ
են քաղաքակրթութենէ, զուրկ են նա-
և զօրութենէ, և թէ Եւրոպայի մեծ-
նկն ու Նիւիլի խաներն, ինչպէս որ
կրտէ գաղղիացի բանաստեղծ մը, Մու-
միս դարձած են, և ոչ ևս իրենց աւե-
րածներով մարդկութեան պատուհաս
կրնան ըլլալ, այլ անհանգիստ կ'ըմանան
դատապարտուած են:

Հաշտութիւնը դարձեալ քաղաքա-
կանութիւնն իր սովորական հանգար-
տութեան մէջ կը ձգէ: Ուստի սահմա-
նադրութեանն ուղղութեամբ ինչպէս
Վաղդից և Վերամիտի մէջ հասարա-
կաց կարծիքն զբաղեցնելէ ետեւ, առ-
այժմ իրաց ձգուեցաւ: Բնորոշ ը-
րազկրները մեծ գովեստներ կը խօսին
Վարդէնի կայսեր խաղաղութեան
վրայ, որ Վաղդից հոգային փոխարի-
նութիւններ տալու չէ ստիպել զԲը-
րուսիա, Վաղդից արդէ ներկայ պա-
րագայից մէջ կայսեր հիւանդութիւնը
որուն վրայ չափազանց զբոյցներ լուե-
ցան, Փարիզի մէջ բաւական անհան-
գիտութիւն պատճառեց: Վաղդից
ներկայ կառավարութիւնը Վարդէնի
կայսեր անձին վրայ կ'երանայած ըլլա-
լով, անոր մահը կրնար զգաւորութեանց
տեղի տալ: Այսպիսի իշխանը տա-
կալին մահով է, և եթէ Վաղդիս
Վարդէնի կայսրը կորուստները զգա-
լութիւնն ունենայ, կայսրու հոգին իւր
նամակալ ըլլայ ամենէն աւելի հա-
ւանական կը թուի, բայց հասարակաց
կարծիքը կանայի կառավարութիւն մը
տեսնելէ կը վախճայ: Վարդից արար

վերջին լուրերը կայսեր առողջութեան
վրայ աւելի ապահովեց ըլլալով՝ այս
երկրիները քիչ մը կը փարատեն:

Եւստրից և Բալկանի մէջ խաղա-
ղութեան բանակցութիւնները Փարիզ
պիտի կատարուին: Բալկանի հաշտու-
թեան գաղաղակը՝ միայն Վ. Եւստրիցի
երկրին Բալկանի արուելը կը յիշէ, բայց
խաղաղական Թիւրքի վրայ երած գծաւա-
րութիւններն ալ զիւրաւ կրնան կար-
գի դրուիլ: Եւստրից տեղութեան ազ-
գային պարտքն Վ. Եւստրիցի ինկած բա-
ժինն Բալկանի վրայ պիտի ձգուի: Վ. Եւ-
թիւր-Բալկանի մէջ խաղաղութեան ուրիշ
վեհապետաց արիւն օրինակ մը առաւ-
րոյր քաղաքական յանգուորաց ընդ-
հանուր ներպայութիւն շնորհելով, ու-
րով Մաժմիլիկի նման Բալկանի մարդ-
եալ լայց եռանդուն հայրենասէր որ-
գիւրդ ոչ ևս օտար երկրներու մէջ ազ-
արեալ կը մնան, այլ իրենց հայրենիքը
գաւառելով և աղաքութեան շնորհիւ
հասարակաց բարեղն համար աշխատե-
լով թերեւ հին կրքերը կը մերկանան:

Ռուսից և Միացեալ Վահան
դաջ կառավարութիւններն այս միջոցիս
իրենց սխալը յարաբերութեանց նշա-
նաւոր փորձեր կուտան: Եւստրիցից
նաւախուսմը Վարդից Բալկանի
նաւախուսմին այցելութեան միջոցով
այս պատուաւիրական դօրձ մեծ հան-
գիտութեւ և ամենափութեանց առիթ
տուաւ: Եւստրիցի կառավարութեան
կողմնէ Բեդրուրի զինուած արտա-
քայ կարգի պատգամաւորներն ազգային
ժողովին հոգմանէ խնայեցութեան ու-
ղերձ մը ներկայացուցին: Եւստրիցի
կայսեր իրենց գէտ փորձութեանց հաւաք-
րութեանց ազատութեւ համար Վաղդիս
մուտքները Վ. Բալկանի մուտքն ալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՏՂԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՅ ՎՐԱՅ Պ. Ի. Ը
ՎԵՐԻՔԻ ԲՐԱՏ ԶՆՆՈՒՊԻՒՆՆԵՐԸ

Փարիզի կայսերական Բիտարանին
անօրէն Պ. Ի. Ը վերէն ուսումնական ընկե-
րութիւն մը հիմնած է Վաղդից ամեն
կողմերը գիտութեանց տարածմանը նը-
պաստելու համար, որպէս զի գաղղիացիք
ուրիշ ազգերէ ետ չմնան: Եւստրիցի
թիւնը գիտութեանց մէջ եղած նոր գի-
տերը կը նշանակէ, մարդկութեան պիտոյ-
քը զիւրաւ լրացնելու ամեն միջոցները
կը քննէ, և նոյն նպատակաւ դարձիք և մե-
քենայներ կը գնէ, գտնաւոր փորձեր կը
գիտողութիւններ կընդգծեն, բնութեան
երեւոյթները քննադատելու միջոցներ
կը բաշխէ և այլն: Եւրոպայի տարի չկայ որ
ընկերութիւնը հիմնուած է և արդէն
5000 անգամ ունի որոց իւրաքանչիւրը
տարին 10 Ֆրանք կը վճարէ, սակայն իր
հաստատութեան սուղ միջոցին 50000
Ֆրանք ծախք ըրած է թէ՛ փորձեր ը-
նելու և թէ՛ բնութեան երեւոյթները
գիտողներուն պարզելու տարւոյ համար:
Եւստրիցի յիշեալ ընկերութեան

նիւթական վիճակին վրայ խօսեցանք
ուրիշ մեր մէջ ալ ընկերութիւններ
հաստատութեան օրինակ կրնան առնուլ:
Իսկ ուսումնական վիճակին վրայ խօսե-
լով, ընկերութիւնն այս տարի իր տա-
րեկան նիւստը Մարիլիա ըրաւ, և նշա-
նակութեան արժանի են անցեալ մա-
յիս ամսին մէջ յանկարծ երեցած նոր
աստղի մը վրայ Պ. Ի. Ը վերէն ըրած
գիտութեան ընկերութիւնը: Եւստրիցի
Պատկին համաստեղութեան մէջն էր, և
ուսման ընթացքը ամենափութեանց
նէր, այսինքն պարզ աչքը հազիւ կը
տեսնուէր: Բայց յանկարծ երկրորդ աս-
տղին տեսնել մը փայլը տալ սկսաւ,
որով գիտնաց ուսման ընկերութիւնը գրաւեց:
Վաղդից երեւոյթը անսած էր նաև 1572
ին Տիբո-Պրահէ երեւելի աստեղագի-
տը, և Վաստիպէի համաստեղութեան
մէջ նոր աստղ մը նշմարած էր, որ առ-
ջին փայլելէ ետեւ անեւրոյթ եղաւ:
Կերեւի որ նոր աստղներուն վիճակն
այս է, և մայիս 12ին յանկարծ իր փայ-
լըն աւելցուցած աստղը դարձեալ իր
լոյրը կորուստներու վրայ է: Ինչ են
ուրեմն այս աստղերը կամ առժամա-
նակեայ արեւները, ուրիշ կ'առնուեն և

ուրիշ կերպիւ իրենց յանկարծական լոյսը:
Եւստրիցի պատմութեան գիւրդն է, բայց
գիտութեան հետեւեալ գիտութեան ըն-
կերութիւնը:

Եւստրիցի մէկ լուրէն մէջ 74000 փար-
սալ տեղ կը ծաւալէ, և արեւէն մինչեւ
մեկը 8 փայլեկանէն կը հասնի, իսկ երկ-
րիս ամենէն մօտ եղած աստղերէն՝ որք
հեռաւոր արեւներ են, 14 տարին կը
հասնի մեկը(1): Ուրեմն այն աստղերը
մեկնէ այնչափ 74000 փարսալներով
հեռու են, որչափ որ 14 տարւան մէջ
լուրէններ կան: Հետեւեալ նոր աստ-
ղին լոյսը մեկ երեւոյթէն 14 տարի յա-
ռաջ կար և նոյնչափ միջոց ալ պէտք
է մինչեւ որ դարձեալ բոլորովն անե-
րեւոյթ ըլլայ: Եւստրից կը հասկնայ որ
նոյն աստղերը կանոնաւոր շարժում չու-
նին, այլ երբեմն կ'երեւն և երբեմն ա-
նեւրեւոյթ կը ըլլան:

Եւստրիցի կարգի երեւոյթը ու-
մանք կը կարծեն թէ երկու աստղաց
ընդհարումէն յառաջ կուգայ, փայլելի
մարմիններ իրարու զարնուելով կը ջն-
մանան և բնակելով լոյս յառաջ կը բե-

(1) Հեռաւոր աստղերուն լոյսն 3000
տարին կը հասնի մեկ:

րեն: Բայց աւելի հաւանական է որ տա-
նեղաց լուսոյն յանկարծ անհիւ իրենց մէջ
եղած հրաբխական բորբոքումներն կը
զայանայ: Ինչպէս որ ըսինք, աստղերը
մեր արեւուն նման արեւներ են, և մեր
արեւն ալ աստղային աշխարհներէն նա-
յոյններուն համար ուրիշ բան չէ եթէ
ոչ աստղ մը: Բայց երկրից մէջ գա-
նալով վիճակի մէջ արեւներ կան: ու-
մանք դեռ նոր կը կազմուին, ինչպէս
են ամպային քառաձկները, ոմանք ի-
րենց բոլոր ճառագայթներով կը փայ-
լեն, ինչպէս են հասարակ աստղերը,
վերջապէս ամենք ալ իրենց նուազ-
ման մէջ են, այսինքն տեղաւ տա-
կաւ ստեղծով կը մարին: Բայց սա-
ռելէ յառաջ կրնայ ըլլալ որ աստղին
մէջ եղած հրաբխական նիւթերը բոր-
բոքելով, կեղեւ պատուեն, և յանկարծ
նոր լոյս մը սփռեն: Սոյն երեւոյթը մեր
մեղրակներն (երկրիս) և մեր արեւին վրայ
ալ կը տեսնուի: Մեր արեւին մակե-
րեւոյթէն կորուսած անսահման ջրածու-
թեան տեղ, նիւթերու խտութիւն մը
յառաջ կուգայ, որ իր սկսած աստղին
վրայ սեղ զիծեր կը ձեւացնէ: Եւստրից
արեւին հետ կը դառնան, բայց միշտ մի

երթալով՝ յատկապէս շնորհակալութիւն յայտնեցին Վարդապետութեան անօրէնութեամբ կայսեր կեանքն ազատեալն համար։ Բերքապարտի լրացելուն յիշեալ դաւադրութեան ընդարձակ կերպարանք մը կուտան, և յեղափոխական գաղափարաց ազդեցութեան կրնձայնն դայն։ Բայց յերաժիշտական գաղափարները՝ Ուստիոյ մէջ խիստ ընդարձակ նշանակութիւն ունենալով՝ կրնան ուրիշ անմեղ գաղափարներու ալ տարածել, և Սիւրբ Երկա շոր արտադրութեամբ բարձրանալ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԻՔ

Փարիզ 28 օգոստոս.
Գաղղիացի տեսուչ մը գնաց Վենետիկ՝ չորս մեծ բերքերն Աւստրիացուց ձեռքէն ընդունելու և երկրին ժողովուրդը խաղաղութեամբ կրնա միանալուն վրայ քուէարկութիւն ընել տալու պաշտօնով։

Փարիզ 29 օգոստոս.
Մէքսիկայի մէջ դաւադրութիւններ երեւան եղան և շոր ձերբակալութիւններ եղան։ Ասոր վրայ գաղղիացի զորապետ մը պատերազմական դրոժոյ, ուրիշ մ'ալ գանձուց պաշտօնեայ անուանեցան։

Մէքսիկայի կառավարութիւնը Մամբորա քաղաքը ծովու կողմանէ պաշտարած ըլլալով, Ամերիկայի Միացեալ-Նահանգացի խաղաղապետ յայտարարութիւն ըրաւ թէ այն պաշարումն ամերիկացի քաղաքացուց չաճուն վնասակար ըլլալով ինքը ձգանքը։

Նաբոլէոն կայսրը զալ շարժու Գիւրից պիտի երթայ։

Փարիզ 27 օգոստոս.
Միպերիայի Իրքուք քաղաքին պահպան զօրքերը ջարդուեցան Լեհերէն։

Պուրիայի խաղաղութեան դրոժէ ամենն ալ ապստամբեցան։

Գուշոյ մը Լեհացիք գէպ 'ի . . . կը քալեն։ (Տեղւոյն անունը չկայ հետադրին մէջ)։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՌԱԳՐ

Լոնդոն 28 օգոստոս.
Դոմ. ընդհ. պարտք 25-25/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թէպէտ եւ րոպական լրագրաց մէկ քանին կրնան թէ Արիւթիմէջ արիւնհեղութիւնն սկսեր է, բայց յիշեալ կղզիէն ուղղակի մայրաքաղաքս եկած վերջին լուրերը դեռ կալու սկսած ըլլալու խօսք բնաւ չեն ընել, այլ կը ծանուցանեն թէ կղզւոյն կառավարիչ Վեմ. Իսմայիլ փաշան և զինուորական հրաւիրականները մեջ չեն մնար, այլ իւրենց երկրորդը կը փոխեն, և երբեմն հրային նիւթերով բորբոքուած կը պատուին։ Այսին ըլլալու է նաեւ տառապանքն ունեցող պապէս յանկարծ ցոյց տուած լուսոյն պատճառը։

Բայց որովհետեւ արեւն անսահման ջերմութիւն կը կորուստնէ ըսինք, չլըր-նար ըլլալ որ օր մ'իւր ջերմութիւնը հասնելով մարի։ Եւ յորոշուած ջերմաչափով ձգելու գիտնալ անկարելի է. բայց եթէ արեւուն բոլոր սիւրը 700 մէթրոթանձրութեամբ տառայ պատած ըլլայ, իր ջերմութիւնը մէկ փամու մէջ զայն կրնայ հալելընել։ Եւս այնչափ ջերմութիւն կապառի որպէս զի արեգակնային ճառագայթներէն մաս մ'ալ մեր փոքրիկ երկրագնդին վրայ յիւսկ։ Ոչ ապրիլէն ասիական ընտելեան ընծայած այն վեմ անսարմանքէն մէկն է՝ որք կը հաստատեն թէ տիեզերաց ամենա-կարող ճարտարապետն ինչ մեծագործութեամբ ստեղծ է ամեն տեղ կենաց սերմերը, որոց զննաւոր աղբիւրն է արեւը։

Գիտնոց հաշիւներն անհերքելի կերպով կը հաստատեն, կրտէ, Պ. Լ. ըլլէ-րիւ, որ արեւուն մարին անհրաժեշտ է, բայց ո՛վ գիտէ երբ, թ երեւ միլիոնաւոր

մանատար Օման փաշան երկուքն ալ հիւանդ ըլլալուն պատճառաւ անշարժ կեցած են, և կրտու թէ առաջինը երկու անգամ հրաժարական տուելէրայց Բ. Գուշոյ չէ ընդունել։ Կղզւոյն տաճիկ բնակիչները քրիստոնեայնեան վախնալով Վանիայի, Հանիայի և Բէթիմի բերքերը կապտատանին, բայց զինուորական իշխանութիւնները չեն ուզեր բնակչաց այս խմբովն տեղափոխութիւնը քաջալերել։ Կայսերական կառավարութիւնը Ֆէրիք Եւսէմ փաշան Արիւթի կայսերական զօրաց հրաւիրականներն փոխանակ Օման փաշային։

Ինչպէս որ արդէն ծանուցած ենք, կայսերական կառավարութիւնը Արիւթի կղզին խողաղեցնելու պաշտօնը Բարձր Արիւթի Մուսթաֆա փաշային յանձնեց, որ յիշեալ կղզւոյն գործերուն մէջ ունեցած երկրաժամանակեայ փորձառութեամբն ամենէն յարմար կերպի այս կարեւոր և փափուկ պաշտօնը կատարելու։ Օգոստոսի 1-ին Ինքնակալը ի նշան Բարձր Մուսթաֆա փաշային վրայ ունեցած համարմանը՝ առաջին կարգի Օմանի իսկանդուլու պատուանշանը շնորհեց։

Սամսի կղզւոյն մէջ Երեստաբեր պէ յին գէմ տեղահանութեան ցոյցեր և խուփութիւն հանելու փորձեր եղած ըլլալով, Սամսի նախկին Մուհամեդ պէշի Երիք Եֆենտին կայսերական տեսչի պաշտօնով Սամսի զինուորացու, որպէս զի տեղական կառավարութեան լիազօրութեամբ մարդիկ յանցանքներէն լուր տեղեկագիրը Բ. Գրան հաղորդէ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ի Էփրոթ Էփրոթ կը ծանուցանէ թէ Եփրատի փոխարքան Բ. Գրան խնդրադիր մը գրեմ է Եփրատի զրբեթէ րոյ որ առեքներն աւելցնելու համար Բարձրագոյն Խանայի փաշան իր այս խնդրանց պատճառ կը բերէ և զիստական կառավարութեան երմտահան ներութիւնները՝ որք Սայիա փաշային իշխանութեան ժամանակ եղած անհազութիւնէն յառաջ եկած են։ Եւս կից զատ երկրագործական զանաձր Սուէրի ընկերութեան վճարելիք հասուցեման, երկրթու զինուոր հիւանդանոցներու և ուրիշ հասարակային հաստատութեանց շինութեան, կայսերական կառավարութեան գրեմ է 18-000 զօրաց ծախ-

տարներէ ետեւ, որք յաւիտենականութեան առջեւ ոչինչ են։

Սոխայի արեւուն ըրած այնչափ ջերմութեան կորուստը փոխարքանութիւն մ'ալ ունի, փամ զի իր շուրջը դարձած անհուն մանեակ մը ձեւացնող անհամար մարմիններէն շատերն Երեւն մէջ զրոյրելով կ'սպառն և ջերմութեան նիւթ կը մատակարարեն անոր։ Եսկից երեւմէն յանկարծ լուսոյ շոջանակ մը կը ծագի և արեւուն մակերկրային կը պատուէ։ Երեւն անհաղին մեծութիւնն ալ ոչինչ նուազ կը ծառայէ իր ջերմութիւնը ստեղծելու, ուստի Երեւն չի կրնար փոքր աստղերու նման շուտով սպառիլ։

Քրեմն արեւուն անհետանալը թէ և ստոր է, բայց այս կողմէն առայժմ վախճալու պատճառներ չկան։ Իսկ երկնային մարմնոց իրարու զարնուելով կորնչելու փառնակն նկատմամբ Պ. Լ. վերէն արդեւ թիւն կուտայ թէ երկնային մեքենականութեան այն սքանչելի և անյղի օրինաց համեմատ, որով երկնից անսահմանութեան մէջ թաւալող բոլոր մարմիններն, արեւներն ու մոլորակները յաճէ 'ի ձախ կը շարժին, թէ՛ իրենց առանցքին վրայ և թէ՛ իրենց կեդրոնին բոլորակը, 'ի յաւիտե-

քին, և վերջապէս Բ. Գրան վճարելը արեւեկանութեան աւելնալուն պատճառաւ մեծագոյն ստակի պէտք ունի եղել։

Տրապիզոնէն դուրս իմանալ մը կը ծանուցանէ թէ Սօսում-Վալէի մէջ Եգպտէիներուն հանած բարբարոսական ապստամբութիւնը զգուշերէ, և արդէն ձերբակալ եղած բազմութիւն տապաւնները խափու պիտի պատժուին եղեր։ Բայց միւսանգամ տրապիզոն պրնտամբութիւն մը պատահելուն առաջին տունելու համար, Ուստաց կառավարութիւնը հրամայեց որ Եգպտէիները ծովեզերքէն երկն և երկրին ներսերը երթան բնակին, և իրենց տեղ Կովկասի հարաւային կողմերէն քրիստոնեայ գաղթականներ պիտի հաստատէ։ Եգպտարաց յափշտակած երեսունի չափ քրիստոնեայ կիներն ալ ազատուած են և յափշտակողներէն ստակ վերժ առնուած է։

Նիկիոյի կողմէն եկող ուստաւորներէ կիմանք թէ Ս. Երափոխման տօնին օրը Երմաշու փառաց եկեղեցւոյն շինութեան սկզբնաւորութիւնն եղեր է և թէ հիմնադրութեան հանդէսը յաւաքելի պէտք է։ Ս. Երաշումն Խաչի տօնին օրը պիտի կատարուի։

Իւրընդմէն առնուած հեռագիրները լուր կուտան թէ յիշեալ քաղաքն այս շարժու երեք անգամ երկրաշարժ եղեր է, բայց բարեբաղդարար մեծ փնտ մը պատահած է։

Ոստիկանութեան Ա. սեմ. պաշտօնեային մայրաքաղաքին առաջին Նիւրիտէ-Հափախ լրագրին անօրէն Պ. Չըրչիլի գէմ գատ բացած ըլլալով, Բ. Գրան լրագրական յանձնաժողովն այս վերջին 30 լիւրա տու գանք տարւապատարարաց, Եւս դատին պարագաները հետեւեալ կերպով կը պատմուի։ Եսկից հինգ ամիս առաջ աւելցու ցախ (չալը) կարող գնչու մ'իւր ստորագրութեամբ նամակ մը կը ստանի 'Նիւրիտէի խնդրելով որ զայն հրատարակէ։ Եւս նամակը, որ կը գանդատէր թէ ոստիկանութիւնը ցախ կարող գնչուներէն անկառ տեղը տուր կը պահանջէ, Նիւրիտէի մէջ հրատարակուելով, ոստիկանութեան Ա. սեմ. պաշտօնեային Բ. Գրան բողբոք, և Պ. Չըրչիլի գէմ գատ բացուեցաւ։ Պ. Չըրչիլ հրատարակած նամակին բնագիրը ցոյց տուաւ յանձնաժողովին, բայց ոստիկանութիւնն ալ կարծեցեալ բողբոքարու-

նից անտի իրենց ունեցած կարգէն չեն կրնար խտարիլ։

Բայց աստղային տշխարհն ալ մեր աշխարհին դուրս թիւն վարող օրին օք կը փարուի զորս Եւստանի հանձարը զըտած է։ Գիտութիւնն այս խնդրոյն լուծումն ալ գիւրացուցեր է, և ըրեւութեան սքանչելիքը գիտելով՝ ամեն բանէ աւելի հրաշանալու արժանի է մարդկային միտքը, որ աստղերէն ալ գերազանց է, փամ զի կրնայ ոչ միայն գանդը հասկնալ, այլ և բարձրանալ մինչև անոնց Երաքից, որ մարդուս այս հիմնալի կարողութիւնը ներշնչած է, կարողութիւն մը որ կրնայ բոլոր թէ քանի մշակուի՝ այնչափ աւելի մեծութիւն կ'ստանայ։

Բայց գտնանք Պ. Լ. վերէն ըրած ուրիշ աստղագիտական գիտութեանց, որոցմէ կը հաստատուի թէ աստղային աշխարհին դուրս թիւնն ալ մերկնէն տարբերութիւն չունի։ Եւս մարդ պոյժաւ զիշերներն երկնից մէջ կը տեսնէ 'Օլիւ-Կաթին կամ ռամիւրէն Գարգոյ ըսուած աստղային կառարմը, որ երկնից մէկ ծայրէն միւսը կը տարածի, և երկու ծիւղ բաժնուելով երկրի երկու կիսագնդերէն ալ կերէ։ Պարզ աչքով Գարգոյն երկայն

ները ներկայացուց, որք յայտարարութիւն ըրին թէ ոստիկանութիւնը բնաւ զերեք կեղեքած չէ և անոր գէմ գանգատ մը չունին։ Եստ վրայ յանձնաժողովը հրաւիրեց Պ. Չըրչիլ, որ նամակին հեղինակը ցոյց տայ։ Այն ալ չի կրնար զանել, յանցաւոր դատուելու։ Բայց որովհետեւ Պ. Չըրչիլ անգղիացի ըլլալով չէր կրնար բանտարկուել, ուստի օրինաց վճռած տու գանգք միայն պիտի հատուցանէ։ Արտու թէ Պ. Չըրչիլ սպառնացեր է ամեն կողմ յայտարարութիւններ, որպէս զի եթէ ոստիկանութեան գէմ որ և իցէ գանգատ մ'ունեցողներ կան՝ Նիւրիտէի գիմն և ինքը պատրաստ է հրատարակելու։

Մեղեալ շարժու հեռագիրն համառօտիւ ծանուցեր էր թէ Փարիզի մէջ Եգպտէի կայսեր տօնին օրը գրգռու գէպ մը պատահեր է։

Շարժու հասած լրագրիներն հետեւեալ կերպով կը պատմեն յիշեալ գէպը։ Կայսեր անուան տօնին տօնիւ եղած հրատարակութիւնները, որք ամեն տարի Երեսեան գաղթին մէջ կը կատարուէին, այս տարի արուստահանդէսի պարտիւն հոն շինուելուն պատճառաւ Ինքնակալի կառուրջին վրայ կատարուեցան։ Հրատարակութեանց միջոցին ոստիկանութեան տեսուչները հանգիստանաց բազմութեան թիւ չառնին Սէնի գետեզերքը խռնելու, բայց հրատարակութիւնները վերջանալէն ետեւ մարտի ոստիկանութեան տեսուչները կոխելով ըսին յառաջ գիմն, և գետինն ալ եղբերէն դաշտիներուն բազմութիւնը կամուրջին վրայ ձախ եղբերէն եկող բազմութեան հանդիպելով՝ այնպէս ուժգին իտար զիմաւորեցին, որ շատ մարդիկ օտքի տակ գային։ Ա. Երաշումն Խաչի տօնին օրը Երմաշու փառաց եկեղեցւոյն շինութեան սկզբնաւորութիւնը ցրուել, և այն ժամանակ տեսուչեան որ օտքի տակ գաղթիներէն ութ հոգի իրզգու եղեր էին, ինչերով մ'ալ ծանր կերպով վերաւորուեր էր։

Ոստիկան Օլբրեյտ Արմի և Բիւրոյ որոց անանկութիւնն ասկից քանի մ'ամիս առաջ մեծ տագնապ ձգած և մայրաքաղաքին ու Խալիքի փամուսակաւնաց ալ բաւական փնտ տուած էր, իր բացը 18 միլիոնէն 5228 000 լիւրայի իջուցած է, և կը կարծուի թէ առաջիկայ հոկտեմբերին սկզբը իր առնելի-

և մեծ ձերմակ մանեակ մը կը թուի որուն մէջ հազիւ կորուցան հեռաւոր աստղերը, բայց հեռագիտակով կը տեսնուի որ իրարու առաւել կամ նուազ մոտաւոր անհամար աստղեր կը բաղկանայ, առանց կարգի խուճիկու հաւաքուած կամ ցան և ջրի սխուռած։ Եւս աստղերն անպայման կը ըսուին, յորոց կը համարուի նաեւ երկիրն ալ։ Երկրին մէջ այսպէս ամաղային աստղերով լցուած շատ կաթնածխիկներ կը զրուանին, բայց միայն Գարգոյն պարզ աչքով մեղի կերելի։ Օրուսոր հեռագիտակով մինչև երկնից անսահման խորքն ամաղային աստղերու կամարներ կը նշմարուին, և այն սահմաններէն անգին ալ ո՛վ գիտէ դեռ որչափ կը զրուանուին։ Մէկ խօսքով նիւթն անկեր ջանալի, արեւներն անհամար և տարածութիւնն անսահման է։

Եւսային աստղերն ամեն մեծութիւն, ձեւ և նոյն իսկ գոյն ունին։ Ումանք աղէկ գիտակով իրլու զատ տառաղիւր կը տեսնուին, իսկ ոմանք ամենին փայլ մը չեն ցոյց տար, այլ լուսնիկն շագի մը, որ տախալին խտացած չէ։ Ուրիշներ ալ կան որք ձեւացած գունտ մ'ունեն, և զորս հրատարակական արեւուն ձաւաղապթիներուն նման լոյծ միջնու-

